



Բ. ՏԱՎՈՒՇԵՑԻ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՆ «ԱՐԱՐԱՏ»-Ի ԷԶԵՐՈՒՄ 1870-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

«Արարատ» ամսագրի հարյուրամյակը նշելիս, չի կարելի չհիշատակել նրա կատարած դրական այն մեծ դերը, որ նա ցուցաբերել է արվեստների և, մասնավորապես, թատերական արվեստի մասսայականացման գործում: «Կրոնական, պատմական, բանասիրական և բարոյական» ամսագիր լինելով հանդերձ, «Արարատ»-ը իր էջերում լայն տեղ է հատկացրել գրականագիտության, ժողովրդական կրթության, առողջապահության, երաժշտության, կերպարվեստի, թատերական և այլ հարցերի լուսաբանությանը:

Հրապարակ գալով անցյալ դարի 60-ական թվականների վերջերին, Հայաստանում՝ Արարատյան դաշտի կենտրոնում, լինելով նրա միակ տպագիր օրգանը մայր հողի վրա, «Արարատ»-ը, բնականաբար, գործունեության ամելի բազմազան շրջանակներ է ընդգրկել, քան, ասենք, նրան զուգահեռ, բայց օտար ավերում լույս տեսնող «Բազմավեպ»-ը, «Սիոն»-ը, «Հանդես ամսօրյա»-ն և այլ պարբերականներ: Այս իմաստով, «Արարատ»-ն ավելի շուտ և առավել շատ է անդրադարձել ժողովրդին հոգող, նրա հասարակական-մշակութային կյանքի, առաջընթացի հետ կապված հարցերի լուսաբանությանը: Այդ հարցերից մեկը, տվյալ դեպքում մեզ հետաքրքրողը, եղել է Հայաստանի տարածության վրա՝ Երեվանում և Ալեքսանդրապոլում գործող ու զարգացող թատրոնի հարցը: Այն, ինչի մասին գրել է «Արարատ»-ը 1869—1872 թվականներին Երևանի և Ալեքսանդրապոլի թատրոնների մասին, միակ սկզբնաղբյուրներն են, որոնց շնորհիվ հնարավորություն է ընձեռնվում կապ ստեղծել դրանց նախորդող և հետագա տարիների գործունեության միջև, որովհետև ոչ «Մեղու Հայաստանի» լրագիրը, ոչ «Հայկական աշխարհ» հանդեսը, ոչ էլ 1872 թվականից լույս տեսնող «Մշակ» թերթն այդ տարիներին չեն անդրադարձել Թիֆլիսից դուրս գործող թատերական կյանքի մասին:

Թատերական բեմը որպես քաղաքակրթության, լուսավորության ու առաջադիմության կարևոր գործոն, հաճախ է համեմատվել եկեղեցու բեմի և դպրոցի ամբիոնի հետ: Դրա համար էլ, շատ հաճախ, թատրոնը հովանավորվել ու խրախուսվել է հոգևոր իշխանության կողմից, մի հանգամանք, որը նկատելի է ինչպես «Արարատ»-ի էջերում տեղ գտած նյութերից, այնպես էլ դրանից առաջ եղած պատմությունից: Այսպես, երբ 1865-ի աշնանը թիֆլիսահայ դերասաններ Գևորգ Չմշկյանը, Միհրդատ Ամրիկյանը և Սեդրակ Մանդիկյանը եկել էին Երևան ներկայացումներ տալու, նրանց ոչ միայն ընդառաջել, այլև ցանկությունն իրագործել է Երևանի թեմի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Բադալյանը: Այդ նրա հովանավորությամբ է, որ Երևանի թեմական դպրոցի երկու դասարանը վերակառուցելով բեմ ու դահլիճի, բավարարել է ոչ միայն այդ պրոֆեսիոնալ դերասանների պահանջմունքները, այլև գրեթե երկու տասնամյակ ծառայել է տեղի թատերասերների խմբերին:

Չմշկյանականների տված ներկայացումներին մասնակցել են թեմական դպրոցի ուսուցիչներ Սիմոն Փրիպատյանը, Նահապետ Աթանասյանը և ուրիշներ, որոնք շուրջ մեկ տասնամյակ վառ են պահել թատերական կյանքը Երևանում:

1869 թվականի սկզբներից Երևանում գործել է կազմակերպված թատերախումբ,

«Թատերական ընկերություն» անվան տակ: Ահա այս ընկերության գործունեության, նրա պատմության միակ վկայությունը «Արարատ»-ի էջերում գետնոված նյութերն են, որ տպագրվել են ամենատարբեր առիթներով:

«Արարատ»-ի Երևանի թղթակցի «Հայկական թատրոն Երևան» վերնագրով հոդվածից պարզվում է, որ թիֆլիսեցի Սողոմոն Աբամելիքյանի «հոգացողությամբ ու վերատեսչությամբ» հայ դերասանական խումբը 1869 թվականի փետրվարին տվել է երեք ներկայացում: 16-ին խաղացված «Ծուշանիկ»-ը ժողովրդի խնդրանքը կրկնվել է 25-ին, իսկ 28-ին ներկայացվել է «Երվանդ Բ» պատմական պիեսը: Քաղաքի երկսեռ դպրոցների օգտին տրված այդ ներկայացումները տեղի են ունեցել թեմական դպրոցի դահլիճում պատրաստված թատերական բեմի վրա» (այժմ այդտեղ բնակելի տուն է՝ Կոմսոմոլի փողոցի վրա, ս. Սարգիս եկեղեցու մոտ): Հստ թղթակցի վկայության, ներկայացումներն սպասածից ավելի հաջողությամբ են անցել: «Այդ ներկայացումներում,—գրել է թղթակիցը (ամենայն հավանականությամբ մասնակիցներից մեկը),—իրենց դերերը առավել աշխույժ և ըստ արժանվույն են կատարել Սիմոն վարժ. Փիլիպպոսյանը, Նահապետ Տեր-Հովակիմյանը, Նահապետ Աթանասյանը, համեստությամբ օր. Եղիաքեռ Դորդանյանը, որը առաջինն է եղել Երևանի հայ տիկնանց և օրիորդների մեջ թատրոնական բեմի վրա հանդիսացող, ներկայացնելով «Ծուշանիկ»-ի դերը»:

1869 թվականի ընթացքում, զատկական տոներին և հետագա շրջանում «Թատրոնական ընկերության» դերասանները տվել են ևս 5 ներկայացում: Ութը ներկայացման հաստիքը կազմել է 812 ռ., որից 600 միայն փետրվարին տրված 3 ներկայացումից: Գումարների այս տարբերությունը կասկած է առաջ բերել թատերասեր վաճառական Աբգար Գուլամիրյանի մոտ, որը և «Արարատ»-ի միջոցով բացատրություն է պահանջել այդ ծախսերի համար: Որոշ բացատրությամբ հանդես են եկել Երևանի թեմական փոխանորդ և թեմական դպրոցի տեսուչ Մեսրոպ վարդապետ Սմբատյանը և դերասանները: «Թատրոնական ընկերության գործունեությունը զրույցի առարկա չդարձնելու նպատակով տեսուչը պարտավորեցրել է դերասաններին, որ իր հետ համապնդվեն իրենց ձեռնարկումները: Իսկ դերասանները մի հայտարարությամբ բա-

ցատրություն են տվել կատարվածի մասին՝ խոստանալով 1870 թվ. սկսած ներկայացումները տալ նոր պայմաններով, որոնք բաղկացած են յոթ կետից: Այդ հայտարարության տակ ստորագրել են խմբի կառավարիչ Սողոմոն Աբամելիքյանը և դերասաններ Սիմոն Փիլիպպոսյանը, Ներսես Սիմոնյանը, Նահապետ Աթանասյանը, Վասիլ Եղիազարյանը և Ալեքսանդր Ասլանյանը²:

Հացատրություններից դժգոհ, Գուլամիրյանը մի ընդարձակ համակով մանրամասն հաշվումներ է կատարում և գտնում, որ ծախսերի մեջ «աչքակապություն» կա³: Նամակը մնում է անպատասխան:

Մի կողմ թողնելով այս փնտրանքային շարժառիթները, պարզվում է, որ 1869 թվականին տրված ներկայացումների համար դեկորացիաներ է նկարել Մկրտիչ Հովհաննիսյանը, որ պատրաստվել են «19 հատ նեղ կույիս և 9 հատ վարագույր ետին կողմանց», «քաթանների կամ միտկալների վրա նկարված բաները, որոնք թատրոնի ամենամեծ հարկավորության պարագաներն են», ինչպես և քրմապետի համար թանգիֆից կարած շապիկը, գնել են նույն այդ տարվա ներկայացումների գեղարվեստական որակը պատշաճ բարձրության վրա պահելու նպատակով: Հացի այս բեմի նորոգման, պիեսների ձևավորման, զանազան բեմական զգեստներ և իրեր ձեռք բերելու նպատակով գնվել են տախտակներ, «շապիկների (արդյունքի) թղթեր», խաս և չիթ կտորներ, անգլիական երկու շղթա, «թվով մեկ հատ աղյակա խաս դերիա և մեկ հատ նախարարի յուբկա շալից» և այլն, և այլն: Այս բոլորը վկայում են, թե ինչպիսի ջանասիրությամբ ու նվիրվածությամբ են աշխատել տեղի թատերասերները: Թատերական կյանքի աշխուժացմանը պետք է վերագրել և այն խոշոր առաջընթացը, որ 1869 թվականի մեկ դերասանուհու փոխարեն 1870 թվականից բեմ են բարձրացել Սոնա Մարաթյանը, Թագուհի Դեկարիսանյանը, Մարթա և Զավահիր Գեղամյան քույրերը:

Երևանի թատրոնի վերաբերյալ այս նամակներն ու բացատրությունները մտահոգել են «Արարատ» ամսագրին, որն իր աշխատակից Ս. Մարությանին «գործուղել» է Երեվան՝ տեղում ծանոթանալու իրերի դրության հետ: 1870-ի փետրվարին դիտելով մի քանի ներկայացում, Մարությանը զոհ սրտով վերադարձել է Էջմիածին և գրել «Մեր

² Նույն տեղում, 1870, № Ժ (փետրվար), էջ 253—254:

³ Նույն տեղում, 1870, № Բ (նունիս), էջ 69—71:

¹ «Արարատ», 1869, № ԺԲ (ապրիլ), էջ 172:

ագգային թատրոններում համառոտ տեսությունը» վերնագրով հոդվածը: Խրախուսելով հայ երիտասարդությանը «ագգը բարոյապես կրթելու» գաղափարով, նա միաժամանակ դրել է թատրոնական ընկերություններ հաստատելու հարցը: «Ազուլիսի, Երեվան, Տփլիսի և Թուրքիայի Նոր Նախիջևանում մեզ հաստատված թատրոնները,— գրել է նա,— արդարև պետք է խրախուսական պատճառ լինի ուրիշ հայաբնակ քաղաքացի մեզ ինչպես Ադրբայջանի, Աթուրքիստանի, Քիշնևի, Վաղարշապատի և այլոց (հայաբնակ) քաղաքացի մեզ նույնպիսի թատրոնական ընկերություններ հաստատելուն: Վասն զի վերջին հիշված քաղաքներում մեզ ևս պակաս չեն քանի մի հառաջադեմ և լուսամիտ երիտասարդներ, որոնց նկիրական պարտքն է ըստ իս՝ այս գազալի թատերական դպրոցը բանալ իրենց քաղաքացի մեզ ևս ժողովրդյան բարոյական և մտավոր կրթության համար»⁴:

Խոսքը մասնավորեցնելով Երևանի թատրոնի մասին, հոդվածագիրը նշում է, որ «բարի նախաձեռնված վաղված հայ երիտասարդությունը» երկու խմբի բաժանված ուղերգություններ և կատակերգություններ է տալիս: Ինքը ներկա է եղել Ս. Աբամելիքյանի ղեկավարությամբ խմբի՝ փետրվարի 2-ին տված Խ. Գալֆայանի «Արշակ Բ»-ի բեմադրությանը: Ներկայացումը տեղի է ունեցել թեմական դպրոցի դահլիճում: «Երեվանյա ժողովուրդը,— գրել է Մարությանը,— թե՛ ոռու, թե՛ հայ և թե՛ տաճիկ՝ հետզհետե շոշովվելով գրեթե բոլոր նստարանները բռնեցին, որ մեծ նշան է տեղվույն ժողովրդյան կատարյալ համակրությանը առ թատրոնը, և մանավանդ որ ուրիշ ազգերը մինչև ցայսօր չեն կարողացած իրենց համար ունենալ առանձին թատրոն, բայց ինչպես որ կլավի, հայոց աշապիսի եռանդը բարի օրինակ լինելու վրա է և այլոց բնական քաղաքին»⁵:

Հոդվածագիրն իր հիացմունքն է հայտնում Աբամելիքյանի ռեժիսորական ու բեմական ձևավորման գործում ցուցաբերած հմտությանը և ու ծառայություններին, գովեստի ու գնահատության խոսքեր ուղղում Արշակի դերակատար՝ Վաղարշապատի հաշտարար դատարանի ատենադարի օգնական և թարգմանիչ Վաղարշակ Ծախաթունյանի հասցեին:

Ողբերգությունից հետո ներկայացվել է դալատեցի Հառություն Ոստանիկի (Հովհաննես Քույրճեկյան) «Չոր հսկայք կամ պրոծավ գնաց» կատակերգությունը, որը նույն-

պես ծախափարությամբ է ընդունվել հասարակության կողմից:

Մարությանի այս արժեքավոր հոդվածում նկատելի է ոչ միայն նրա անձնական համակրանքը դեպի թատրոնը, այլև «Արարատ»-ի ընտրած ուղղությունը՝ բոլոր հայաբնակ վայրերում թատերական արվեստն արմատավորելու և զարգացնելու նպատակով: Այստեղ, միաժամանակ, տեղ է գտել ազգերի բարեկամության և համագործակցության գաղափարը. հայկական ներկայացումներին ներկա են եղել ոռու և ադրբեջանցի հանդիսատեսներ, որոնք խանդավառված իրենց համաքաղաքացի հայերի ունեցած հաջողությունից, տարիներ հետո, իրենք ևս, իրենց մայրենի լեզվով սկիզբ են դրել գեղարվեստի այդ ճյուղին:

Ահա սրանք են Երևանի թատրոնի մասին գրված նյութերն «Արարատ»-ի էջերում:

Համեմատաբար քիչ, բայց և այնպես «Արարատ»-ի էջերում իր արտացոլումն է գտել նաև 70-ական թվականների Ադրբայջանի թատրոնը: «Արարատ»-ի մրջտակալ թղթակից Մկրտիչ վարժապետ Արաքսյանն իր «Մի քանի տեղեկություններ Ադրբայջանի թատրոնի և բարեգործական նպատակով կազմված ընկերությանը վրա» ծավալուն հոդվածում խոսելով դպրոցների, ընթերցարանների քացման հետ կապված դժվարությունների և նրանց գործունեության մասին, միաժամանակ գրել է. «Մեր մեջ կարծես սովորական է՝ որ մի որևիցե հասարակ օգուտ գործ մեծ եռանդով կսկսվի, բայց հետզհետե եռանդը բազմապատկելով գործին լավ ուղղություն տալու և կանոնավորելու փոխանակ՝ կսկսի նվազել և հետևաբար գործն էլ կհանդիպի իսպառ դադարելու տխուր բախտին. ինչպես որ փոքր ինչ ժամանակ տևելուց հետո թատրոնն էլ հանդիպեցավ»⁶:

Դադարելու տխուր բախտին հանդիպելն ահ է, որ 1865 թվականի մայիսին հիմնադրված այդ թատրոնը 1866-ից կանոնավոր խոսք ու գործունեության կանոնադրություն ունենալուց հետո, հետզհետե թուլացել է իր աշխատանքները: Տոդարակի ծանոթության մեջ Արաքսյանն առ հանգամանք բաժատրել է առաջին. «Թատրոնը թե որ կանոնավոր լինի, իրավի հասարակաց բարոյ կրթության և նոցա պատմական հրահանգի, անցից ծանոթացնելու մասամբ ունի լուր մեծ նշանակությունը, ինչպես որ փորձով տեսնված է օտար երկրներում մեջ. սակայն մեր քաղաքի նման նոր զարգացող ըստ մեծի մասին անվաճառաշան, և ժողո-

⁴ «Արարատ», 1870, № ԺԱ. (մարտ), էջ 279:

⁵ «Արարատ», 1870, № ԺԱ. (մարտ), էջ 280:

⁶ «Արարատ», 1869, № Ե (սեպտեմբեր), էջ 114:

վորող թատրոնական ճաշակին դեռ չպատասխանված քաղաքների մեջ շարունակ թատրոն պահելը խիստ մեծ դժվարություն է, և գրեթե անկարելի. ուստի և այդ պատճառով մեր թատրոնի կյանքն էլ կարճատև եղավ⁷:

Այդ տարիներին թատրոնը դեռ ավելք-սանդրապոլիցիների համար հոգեկան բավականություն, անհրաժեշտություն չդառնալու մասին է բողոքել նաև տեղի թատերասեր Հովհաննես Խոջայանը: Նա իր «Գյումրի» հոդվածում նկարագրելով քաղաքի և նրա բնակչության, հասարակական ու մշակութային կյանքի, կրթության օջախների վիճակը, դժգոհությամբ նշում է, որ «Թատրոնական խաղ սկսվեցավ այստեղ 1865 թվին. բայց ժողովրդի մեծ մասի հասկացողության շնորհիվ... չկարողացավ շարունակություն ունենալ, թեև դերասաններն ևս աշխատում էին առանց ակնկալության վարձու»⁸: Խոջայանը լուրջ հիմքեր ուներ դրա համար: Թատրոնի կրթիչ դերը դեռ ըմբռնելու, հետամնացության մեջ խաղափելու, դերասաններին զանազան պիտակներ կպցնելու տխուր փաստերը ավելի շատ հենց Ալեքսանդրապոլում է նկատվել: Պատճառներից մեկն էլ հենց դա է, որ եթե Երևանում առաջին կին դերասանուհին բեմ է բարձրացել 1869 թվականին (իսկ ըստ Ն. Աթանայանի 1865-ին), ապա Ալեքսանդրապոլում այդ հաղթական քայլը կատարվել է 1873-ին (Զարուհի Գյուլումյան և Երանուհի Տիգրանյան):

Դերասանուհիներին արհամարհելու, նրանց ծիծաղի առարկա դարձնելու և հասարակության մեջ խայտառակելու մի փաստով հեղինակը, նրա հետև և՛ «Արարատ» ամսագիրը դատապարտել են փողի քսակը քաջության գեղեցիկ դարձրած մարդկանց, պախարակել նրանց և նրանց նման մտածողության տեր մարդկանց վերաբերմունքը դեպի թատրոնն ու նրա մշակները:

Ահա թե ինչ է պատմում այդ առթիվ Հ. Խոջայանը. «Ես ևս,—ասում է նա,—իբրև այդ թատրոնի դերասանների շարքիցը գոյով, մեկ օր մի վաճառական պարոնի մոտիցը անցնելիս, հարցվեցա նրանից. «Այբե՛տ օր կերթաի կը ձեր թեաթիորը, օղորդ ի՞նչ կենեք ձեր»։ Պատասխանեցի՝ «Կարող եմ մեկ օր շնորհ բերել այնտեղ և տեսնել աչքերովդ թե ի՞նչ կենեմք կը»։ ասաց «գաթի ես միտքս ծռել եմ օր մեկ օրում պիտի գամ թիաթիորը. ըմբ է՛ս միտք կենեմ կը, թե հիմա շահի տամ, ինձի ամոթ է, թե տասը շահի տամ, փարան ափսո՛ւ է, է հրըը

մնա աշենք»։ (նկատեցի, որ միտք ուներ ինձ բազարի միջին ներկայացնել տալ մի գործողություն)։ ասացի «թո՛ղ դերասանները չարչարվին առանց շահքի, տեսնե՛ք նրանց վերջն ի՞նչ կլինի. դուք էլ ափսոսացե՛ք տասը շահո՛ւն, տեսնե՛ք ձեր վերջն ի՞նչ կլինի»։ թողի անցա՛:

Իհարկե, քաղաքական հաղթանակը դերասանների կողմն էր, որոնք հազար ու մի գրկանքներով... ներություններով արհամարհեցին ու հաղթահարեցին բոլոր տեսակի խոչընդոտներն ու դժվարությունները և ավելքսանդրապոլիցիներին դարձրին թատերասեր ու թատրոնի գիծ:

Հ. Խոջայանի վերոհիշյալ «Գյումրի» հոդվածում շոշափված է ևս մի հարց, որը սերտորեն առնչվում է թատրոնի կատարած դրական դերի գնահատությանը: Դա սրճարաններում հայ աշուղների ո՞ր լեզվով ելուցելու, և ինչու անպայման հայերեն երգելու հարցն է: Ըստ հոդվածագրի, սրճարաններում աշուղները միշտ թուրքերեն են երգել. այդպես է եղել և հարսանիքներում: Խոջայանի այս վկայությունը մերժում է մի այլ ավելքսանդրապոլցի՝ Կարապետ Մատինյանը: Զիվանու մասին գրած իր հոդվածում Մատինյանը հերքում է Խոջայանի ասածը, դրանք համարելով «բոլորովին սուտ»: Նա գտնում է, որ այժմ կատարվող երգերը բոլորն էլ հայերեն են և որ հայերեն երգերի տարածման և թուրքերենի նկատմամբ առավելություն ձեռք բերելու գործում չափազանց մեծ դեր են կատարել թատրոնը, հայերեն տրվող ներկայացումները, «որովհետև Ալեքսանդրապոլը երբ ունեցել է իր մեջ թատրոն (շնորհիվ հարգալիցապատիվ սյունեցի Ալեքսանդր Մելիք-Հայկազյանի) և երբ թնդացրել է թատրոնական բեմի վրա ազգային երգերի արձագանքը, հենց այն օրից Ալեքսանդրապոլու աշուղները սկսել են երգել հայերեն, որովհետև հասարակությունը այդ մասին ավելի սեր և համակրություն է ցույց տալի»⁹: Մատինյանն այնուհետև նշում է, որ հասարակությունն այլևս «ականջ չի դնում» թուրքերեն երգերին, և որ մարդիկ առավելապես հաճախում են այն սրճարանները, ուր աշուղները երգում են հայերեն: Որպես օրինակ նա բերում է Զիվանուն (Կարապետ Տալոյանի սրճարանում), Հովհաննեսին (աշուղ Խրթոթ-Ալմույանի սրճարանում), Թաթոսին (Հավեսի) և Մալուխին՝ այլ սրճարաններում:

Դեռևս հաստատուն գործունեություն չունեցող թատրոնը պարզ է, որ չէր կարող խոսակցության նյութ լինել ամսագրի էջե-

⁷ Նույն տեղում:

⁸ «Արարատ», 1871, № Ժ (փետրվար), էջ 346:

⁹ Նույն տեղում:

¹⁰ «Արարատ», 1871, № Է (նոյեմբեր), էջ 415:

րում, ու «Արարատ»-ն այլևս չի արձագանքել Ալեքսանդրապոլի թատերական կյանքին:

Այս տարիներին՝ 1872-ին, մի թղթակցություն էլ տպագրվել է Մոսկվայի ուսանողական ուժերով տրված մի ներկայացման մասին: 1871-ի դեկտեմբերի 18-ին Մոսկվայի ուսանողները ներկայացրել են Մ. Պեշկոպաշյանի «Վահե» ողբերգությունը հոգուտ չքավոր ուսանողների: Այդ, ինչպես և դրանից հետո խաղացված պիեսում հանդես են եկել բժշկական, իրավաբանական և այլ բաժինների ուսանողներ Արամյանը (Վահե), Տեր-Հովհաննիսյանը (Արտավազ), Մանուկյանը (Զարմայր) և ուրիշներ: Ուսանողական այս ներկայացումներին սիրահոժար օժանդակել են օրիորդներ Սո-

լոմե Ստեփանյանը և Լեյնհոլդ քույրերը:

Թատրոնի, ժողովրդի լուսավորության և առաջադիմության հարցերում նրա ունեցած առաջնակարգ դերի ու նշանակության մասին «Արարատ»-ի էջերում գետնոված նյութերը վկայում են թատերական արվեստի նկատմամբ ամսագրի ունեցած առողջ դիրքավորումը, շահագրգռվածությունը ցուցաբերել ամենուրեք տարածելու և մասսայականացնելու հայ դրամատուրգիան ու դերասանական արվեստը, բարձր պահելով այդ ազգօգուտ հաստատության բարոյական ազդեցությունը հասարակական-մշակութային կյանքում:

Ահա այն հարցերն ու երևույթները, որ արժարժել է «Արարատ» ամսագիրն իր էջերում 1870-ական թվականներին:

